

Hentchak :  
ORGANE DU PARTI  
RÉV. ARMÉNIEN  
HENTCHAKISTE.

# Հենչակ

ADRESSE  
M. BELLART,  
85, Peckham Rye,  
LONDON, S.E.  
Angleterre.

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ՑԱՐԻ ԶՄ



Յարիզմի սպայակոյտի ֆանֆարոն և ի գիւնորական հանձարը, զլորելով Ոռուսաստանն ամենախելազար մի պատերազմի եղերական արկածի մէջ, այսօր ամբողջ աշխարհի դիմաց երևան է գալիս իրբեւ հերոս ամենախայտառակ պարտութիւնների: Նրա մնապարծ Խրոստատանքի, նրա արտաքին խաբէական փայլի ու շքանշանների միմոսական զընկզընկոցների տակ չէ բարախում մինչև իսկ մի սիրտ Գրօն-Ակինոտի, ախմար, բայց անկեղծ, այլ թաքնում է մի սնոտի միտք՝ զուրկ ամեն կազմակերպական ու վարչական տաղանդից, մի հոգի՝ ապականւած տգահութեան ու կաշառակերութեան արբեցուցիչ տենչով, անբարտաւանութեան և ինտրիգների ախտով: Օօրք, ֆինանս, վարչութիւն, բոլորն անկարգ, բոլորն անկազմակերպ, բոլորը հաստատած բիւրօկրատական թղթակերձեական ներկիրը և ամբողջ հարիւր ու յիսուն միլիոն ժողովրդներն ընկած միահեծան մէկ անձի — յարի ձեռքը, որ շրջապատւած է քսու ու փշչացած ծառաների վոհմակով, պար ազ ի տներ սրանք և պարագիտ ինքը յարը՝ հաւած ժողովրդի մարմնին, իրբեւ վամպիր. — դա՛ է յարի կառավարական սիստեմ: Այդ բարձրագոյն ոճագործները, կուլ տւած լինելով ահագին միլիարդներ իրը թէ զինորական ծախսերի համար, ձեռք առած ու մշակած չեն ո՛չ մի նախապարաստութիւն, ո՛չ մի նախազգուշութիւն, ո՛չ մի նախազիծ՝ մզելու համար որ և է պատերազմ: Ամենալիտի յոխորաանքով և անխիղծ թեթևամտութեամբ նրանք զինուորական վաշտերին, այդ ծաղեկ երիտասարդութեան, խորտակել են տալիս հեռաւոր ծովերի յորձանքներում, զնում թնդանօթների բերանի առաջ և մահացնում Մանջուրիայի առնապատճենների ձիւնի տակ: Աթէ ամեն պատերազմ

ըստ ինքեան արդէն ամենամեծ ոճիրն է ընդդէմ մարդկութեան, ներկայ պատերազմն իր հանգամանքներով այդ տեսակէտից գերազանցում է բոլորին: Լինելով ամեն կերպ լիովին անպատրաստ՝ յարիզմը նետուեց պատերազմի գաշտ և զրանով իսկ երևան եկաւ ամենացիկական, ամենատժարդի, գազանային կերպարանքի տակ իր վերաբերութեամբ դէպի ո՛չ միայն առհասարակ մարդկային, այլ իր սեփական հայրենակիցների կեանքը, դէպի դրա սրբութիւնը: Այդ էլ բաւական չէ. նա ցոյց տւեց անլուր սնասպարծութեան ոգի, հօգս չը տանելով մինչև իսկ իր այն սովորութեան մասին, որ մարդկային դիակների լեռները գեթ իրան ծառայած լինեին իրերեւ պատւանդան իր յանցապարտ գոյութեան և իր արխինաշաղախ փառքին: Դա յարիզմի միմիակ հիմքի, մարդկային մակց, արիւնից ու ուկրներից կառուցւած հիմքի, խախտաման ապացոյցն է արդէն: Դա յարիզմի կատարեալ և ամօթակի մնանկութեան գոյժն է արդէն, որ ապացուցանում է նրա ապիկարութիւնը նոյն իսկ ինքնապաշտպանութեան մէջ, որ ներկայացնում է նրա կառավարական ամբողջ սիստեմն իրերեւ մահաշուք աւերակների անկերպարան մի կոյտ, որ վերջնական դատապարտութիւնն է նրա ամբողջ գոյութեան: Աւ ամբողջովին կառուցւած լինելով զինորական և չին օվն ի կ ա ն գրութեան վրայ, այդ բէժիմն այժմ գնում գահավիժում է նոյն գոռող Աէվայի ջրերում, որոնց ափերին գոռող Փետրոս Մէծը դրեց հիմքն այն երկաթաձուլ ապարանքի, որ Ոռոմանօվների ձեռքին ամբողջ Ոռուսաստանից գարձեց մի երբէք չը տեսնեած Բաստիլիա:

Պահպանելու համար իր խախտող գոյութիւնը, արդարացնելու համար իր, այլ ևս պատմականապէս մեռած, բէժիմ րայուն ձ'էտրը, շակելու համար իր կիսախարխուլ գահի փտած ոտքերը և այդ նպատակով շարունակելու համար իր ֆինանսական պատերազմը Աւրօպայում, ցարեզմը, դրանելով Մանջուրիան, զրգուց Աւագոնիային դէպի պատերազմ: Աւ երազեց նաև

այդ պատերազմով խարել իր պահանջկոտ ու շահախնդիր բուրժուազիային հեռաւոր ովկիառնոսներում թաղւած առասպիլական հարստութիւնների մի ը ժով, արւեստական կերպով հրահրեց միամիտ հասարակութեան զգելի շօվին ի զմբ: Եւ այդ բոլոր ընթացքով նա եկաւ ծանրացաւ ու կենորոնացաւ մի կէտի վրայ: — նա ձգնում է խաւարեցնել աշխատաւոր ժողովրդի, և մասնաւորապէս պրօլէտարիատի, նախ այն գիտակցութեան նորածագ արթնութիւնը, որ սկսել է արեւով լուսաւորել Ոռուաստանի սօցիալ-քաղաքական կեանքի վեհը, և ապա խեղգել նրա այն խորին ու շարունակ ծաւալւող գժգոհութիւնն իր ձգտութիւնով, որի ալիքներն արդէն սպառնական ու կործանարար զօրութեամբ սկսել են զարնել ցարիզմի բերդի դէմ:

Եհ, նրա հաշիւները, սակայն, յայտնեցան օլոյին: «Նա շատ մեծ յոյս էր դիմել իր զէնքի ոյժի վրայ: Հէնց առաջին ամօթարի պարտութիւնները, որ շարունակւում են մինչեւ այսօր, յրւեցին նրա պատրանքներն այդ նկատմամբ: Եպա նա մոռացել էր ի նկատի առնել իր սեփական օրդանիզմի փութիւնը, որ սակայն հոտում է առաջնապէս, ձկան նման, զլիից: Եւ վերջը նա զիւրին էր կարծել սպատերազմական արիւնաթաթախ վահանով ծածկել ու գոցել ժողովրդալին պահանջների հզօր վուլկանի լիաբաց բերանը, պից զարհուրելի ուժով գուրս են ժայթքելու ժողովրդալին սրտի ու մտքի կուտակած հուրերը և ազատութեան կրակով բոցավոելու Ոռուաստանի խաւարամած ու շարաշուք հօրիզոնը: Ոռուաստանի պրօլէտարիատն արդէն հզօր ձայնով բողոքում է այդ պատերազմի — սրպէս և ամեն պատերազմի — դէմ՝ յանուն խաղաղութեան, յանուն ամեն ժողովրների եղայլութեան, յանուն առաջադիմութեան:

Արպիսի էլ լինէր, սակայն, այդ պատերազմն հէնց իր սկզբից, ունենար ցարիզմը մասնակի յաղթութիւններ և կամ նոյն իսկ, ենթադրելով անհաւանականը, ունենայ նա վերջնական յաղթանակը, մի բան ակնյալտնի է, մի հետեւանը անխուսափելի է: Դա է՝ Ոռուաստանի տնտեսական ու ֆինանսական մնանկութիւնը, նրա ժողովրդների նիւթական թշւառութիւնը, երկրի խնդուստրիալի և առևտրի անդամալուծումը և աշխատաւոր դասակարգից միլիօնաւորի անփոփ շպրտւիլը փողոցները, անդործ, սոված, մերկ:

Ռայց զբանով հանդերձ ակներեւ է մէկ այլ բան ևս, օրւայ խնդիր է դառնալու մէկ այլ հետեւանը ևս: Դա՝ մօտալուա անկման հաւանականութիւնը ցարերի րէժիմի, որ վերջնական կերպով դատապարտուած պէտք է համարել արդէն քաղաքակիրթ մարդկութեան առաջ: Եւ այդ անկումը նշանակում է վախճան ո՛չ միայն դէսալոական րէժիմի մէկ ամբողջական զանգւածի, այլ վախճան մէկ ամբողջ աշխարհի՝ աղբիւր, բոյն ու կենորօն ամեն անարդարութիւնների, ամեն բռնութիւնների, ամեն ոգութիւնների: մէկ աշխարհը, որ իր գոյութեամբ տապանաքարի պէս ծանրացել է որպէս իրա, նոյնպէս և այլ երկիրների ժողովրդների ծակատագրի վրայ, դահիճ նրանց զլիին և գերեզմանագործ նրանց ազատութեան: մէկ աշխարհի, որ իր կառավարական սիստեմով կապարի պէս ընկել է ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան խղճի ու գործերի վրայ, պատշաճատելով նրա ազատկեանը հնութեան, յետագիմութեան ու պատերազմային փայլինութեան ախտն ու խելագարութիւնը:

Եսկ է ցարիզմը՝ համաձարակ իր երկրի համար, համաձարակ ամբողջ մարդկութեան համար:

Տապալել ցարիզմը և ամենալայն դէմօկրատական հիմունքների վրայ հաստատել քաղաքական նոր րէժիմ, իրրեւ ուղի առաջազիմութեան, տանող դէպի սօցիալիզմի յաղթանակը — գա՛ է այն մեծ ու պատմական գործը, որ այսօր ընկել է բաժին Ոռուաստանի Պօցիալ-գէմօկրատիալի վրայ, երկրի պրօլէտարիատի այդ առաջաւոր գնդի վրայ, որ կազմւած է Ոռուաստանի բոլոր ազգութիւնների զիտակցական պրօլէտարիատից և որի շարքերում հայ սօցիալ գէմօկրատիան էլ զրաւել է արդէն իր տեղը և ունի իր լրացնելեր դերը: Եւ իր այդ մեծ գործով Ոռուաստանի Պօցիալ-գէմօկրատիան՝ տապալելով ցարիզմը՝ տապալած կը լինի բըռնապետական րէժիմ այլ երկիրներում ևս և քաղաքակիրթ մարդկութիւնը կը փրկէ իր պատութեան, զարգացման ու բարօրութեան ամենաուերիմ և ամենաստելի թշնամիից:



# Ա Ա Ս Ո Ւ Կ Ն

Այսի քանի ժամանակից ի վեր շարունակ՝ լուրեր են համում Սասնոյ մասին, լուրեր՝ գուտող ծանր դեպքեր և թելադրող տիսուր նախազգացումներ։ Այդ լուրերը, իրանց ամփոփ ձեւակերպութեամբ, կայանում են նրանում, թէ Սասուն կան հայ յեղափոխականներ, որոնք պատրաստում են ինքնապաշտպանութեան և որ, միւս կողմից, քիւրդ ցեղեր ու օսմանեան զօրքեր հաւաքւում են Սասնոյ շուրջը ու ֆեսազիներին կալանառելու։ Մենք արգեն գիտենք, թէ այդ վերջին խօսքն ինչ է նշանակում, երբ մանաւանդ նրա գործադրողներն են արիւնաբու քիւրդերը և օսմանեան կողոպտասէր զօրքերը։ Այդ միակ խօսքն ազբիւր է յորդառատ արեան, որովհետև ու ֆեսազիները բռնել՝ սուլթանի ստրուկների բերանում համանիշ է կոտորած անելուն։ Եւ տաճկական անամօթցինիզն այդ էլ չէ ծածկում, առաջ բերելով ամբաստանութիւն, թէ Սասունցիներն ուզում են ապըստամբել։ Հենց այդ առաջադրութեամբ թիւրք կառավարութիւնը կանխապէս, այսօ՛ր իսկ քաղաքականութեան պղտոր աղբիւրում լւացւած է համարում իր ոճրագործ ձեռքերը, որոնցից վա՛զը ծորալու թշւառ հայի արիւնը։ ու ֆէտալիներ։ Նրանց կալանառերելու պատրւակ, որ յանկարծ փոխուում ու գառնում է ամբաստանութիւն Սասնոյ գէմ իր ապստամբ, որ նա չէ՛, և ապա քիւրդերի ու զօրքերի կուտակում, որ վախճան է առնելու Սասնոյ կոտորածով ահա՛ այն բռնազբօսիկ գաղանային տրամաբանութիւնը, որով ձգւում են արեան գծով սուլթանի կառավարութեամբ արիւնածարաւ առաջադրութիւններն և հետեւթիւնները։ Եւ կոտորածն արգեն սկսել է ամենավերջին լուրի համաձայն մի քանի գիւղեր արգեն ենթարկել են քիւրդերի ու զօրքերի վայրենի ասպատակութեան, և հէնց այս բօպէիս թերեւս Սասունցու արիւնը առւակներով հոսելով՝ ծծում է մայլենի հողով։ Սոսկալի՛ բօթ, որ եթէ կակծալի է հայկական զգացման համար, մահաշուք սուգ է հայութեան համար, գտոնազէտ է նաև յեղափոխական տեսակէտից։ Արովհետև ներկայ քաղաքական հանդամակներում, որովհետև ներկայ ազգային վիճակում թիւրքիայում, որովհետև յեղափոխական ոյժերի ներկայ անկազմ, անկերպարան և յամենայն գէպս անզօր դրութեան մէջ նոյն այդ երկրում։ մի կոտորած Սասնում, որ թիւրքաց-Հայաստանի արեւելեան մասի յեղափոխական բերդն է կոչւած լինելու, գէպի ուր ձգտում են յեղափոխական սրտերի բոլոր զարկերը, և որն ապագայ աղաստագրութեան յոյսերի վառարաններից մէկն է, մի կոտորած այդ Սասնում համականար է մեր յեղափոխական ամենագլխաւոր

գիրքերից մէկի անկման, համահաւասար է մեր ամենատեսն և ամենափայտիած յոյսերից մէկի կործանման, համահաւասար է յեղափոխական գործի կրած մի մասնակի, բայց Խիստ ծանր հարւածի։

Այդ բոլոր քաղաքական, ազգային ու յեղափոխական ներկայ հանգամանքներն անհրաժեշտաբար պէտք էր աչքի առաջ ունենալ և ամեն-մի յեղափոխական քայլ ու ձեռնարկ գործադրւէր Սասունում այդ հանգամանքների զօրութեամբ պահանջւած զգուշաւորութեամբ, շրջահայեցողութեամբ ու տակտիկայով։ Բացի այդ, պէտք է այժմ աչքի առաջ ունենալ մի հիմնական — գուցէ ամենահիմնականը — պայման ևս թիւրքահայ յեղափոխական գործի ժամանակայարմար ու աշող ձեռնարկների տեսակէտից։ յեղափոխական ոյժերի կենտրոնացումը երկրի հիւսիսային սահմանագլուխ կազմով գաւառներում՝ ի գիմաց այն ներքին գէպքերի, որ կարող են առաջանալ դրուսաստանում ներկայ ուսւեապօնական պատերազմի առիթով։

Ամենավերջն բօպէին լուր կայ, որ տեսնելով արգեն մի քանի գիւղերի աւերումներ Սասունում օսմանեան զօրքերի ձեռքով, Անգլիական, Ֆրանսիական և Ռուսական հիւպատունները հրահանդ են ստացել իրանց կառավարութիւններից հսկել հայերի կենաց և ինչքի ապահովութիւններն և գիմումներ անել բարան՝ զսպելու իր զօրքերի վայրենի ու գիւրին սըխադրութիւններն ի հաշիւ մէկ անպաշտպան ժողովրդի։

Յաւիտենական կատակախաղ, որ միշտ վերջանում է արիւնահեղ եղերով հայութեան գլխին !

Ա.

# Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

## Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Թ Ի Ւ Ր Բ Ի Ա Յ Ի Յ

Թերքան, 8 Ապրիլ, 1904.

Այս վերջին ամիսները հարկահաւաքներու կողմէն կրած նեղութիւննիո անպատճելի են։ Օր ըստ օրէ, այս կամ այն պատրութեակով հարկերու տեսակը և բանակը կը բազմանայ ու օր չըլլար օր զապթիէն երեսդ ի վարկախուի։ Աս հարկահաւաքը զապթիէ օլաճ ախն երը շանիմէն հիշ չեն համար, պիտի՝ առաջ վերջացաւ զնաց եթէ թիշ մը խօսիմ, աղաշեմ, պաղատիմ ըսես նէ, աղ բանդ բուրդ է։ Հիփ-շիտակ օրհնեալ բանոր կառաջ նորդուիս, բան մը որ Հայերու համար սովորական զարձած է և ամեն հայ ուխտատեղիի մը պէս ամիս շանցնիր որ այցելութիւն մը չընէ։ Ազա՛ այն հայուն, որ բանտին մէջն ալ անկարող կըլլայ, ու է է միջնաւ պարտեց վճարելու այդպիսին զիսնալու է, որ բանտէն

դուրս ելածին պէս տունը անկողին, հագուստ, աման, կով, ձի և լու չէ մեացեր. զանոնց կամ առանց հաշուի — ըսել կուզենը յափշտակութեամբ տարած են և կամ կնիկներուն, երախաններուն ձեռքէն բռնի առած՝ տարած շուկան իրենց արժէքն շատ պակաս գնով ծախած և պետական այլ և այլ պարտցերու տեղ հաշուած են. Ահա այս է մեր Սուլթան Համիտի հառավարութեան օրէնքը: Ե՛, որո՞ւն ինչ ըսենց, որո՞ւ բողոքենց, Թազաւորէն ոկտած մինչև յետին զապթիէն աւազակ օղլի աւազակ է. «Գողը գողէն գողացաւ, Ասուած տեռու զարմացաւ»:

Այս մարդիկը աղէկ հասկցեր են մեր թոյլ տամարը, մէկ կողմէն թոյլ կուտան որ մեր եղբայրները երթան պանդստին, հազար տեսակ դառն աշխատանցներով քանի մը դրուշ վառակին, որպէս զի միւս կողմէն, վաթան դրկուած փարաները տանինց լեցնենց ատոնց զրպանը: Մեր աշխատանցն ալ արգէն որո՞ւն համար է:

Դամանակ մը կար, որ մեր շրջակայ զրացի Քիւրտերը մեզի հետ շատ աղէկ էին, սակայն Համիտի կառավարութեան ուզածն ալ ատ էր: Հազար արզուհայներ, տառը հազարներով աղաչանց, պաղատանց, բողոք, քանի փարա կը նեն. չէ՞ որ բարեգութ Սուլթանի, բարեհոգի պաշտօնեաներու թելաղրութեամբ կը կատարուին ատոնց: Քիւրտերը երեսը առած էին, աստաղը պակաս էր, ան ալ Սուլթան Համիտը կարել տուած էր — Համիտիներու գունդերուն:

Քիւրտերը առանձնապէս Հայերու հետ ո՛չ մի ցեղային կամ տեղական թշնամութիւն չեն ունեցած, ընդհակառակը այլպիսի ցեղական թէ կրօնական տաելութիւն միշտ կը տածեն թուրքին դէմ. սակայն որպէս աւազակաբարոյ, որպէս կողոպւտի վարժուած մողովուրդ օգտուելով կառավարութեան տրամադրութիւններէն իրենց աւազակային բոլոր ընդունակութիւնները Հայերու վրայ կը փորձեն: Վերջին տարիներս արգէն այնցան երես առած են, որ հիմա կառավարութիւնն ալ հիշ բանի տեղ չեն գներ: Եթէ վերջինո անոնց ցիշ մը նեղէ և կամ առանց անոնց ցէլքին հրաման մը զրծագրել ուզէ անմիջապէս ոհհաւար՝ կանչելով անմատչելի օսորերը կը բաշուին և կառավարութենէն ստացած փառաւոր հրացաններով՝ իրեն գէմ կը կռուին: Այս ալ ըսենց, որ Քիւրտերուն կերպ մը միայն կայ ինկօքցը. նելու, այն է, որ Հայերն ալ զինուին ու անոնց պէս տեղը եկած ժամանակը Հայ ասպատակային խոմքերն ալ հրացաննին պայթեցնեն: Քիւրտը որ տեսայ Հայ այդ ոյժը կամ պիտի զինաթափ ըլլայ, կամ պիտի Հայ բարեկամ մնալով՝ անոր զինակիցը գառ առանձները, և բանորները խաղաղ ցոյցերով տօնում էին նահատակ ընկերների մահւան տարեգարձը: Դը-

Աս տեղի Հայ ժողովուրդը կոտորածներէն առաջ բաւական լաւ զինուած էր, բայց անկէ ետքը տարուէ տարի մանրակրկիտ խուզարկութիւններու պատճառաւ շատերը անզէն մնացին: Հիմա եթէ ըսեմ թէ բոլորովին զէնց չսնինք՝ սիսլ մը ըրած չեմ ըլլար: Ցաւալին ան է, որ ժողովուրդին ցով փարա ալ չի մնաց որ կերպով մը զայն ձեռք բերէր: Ամբողջ թերջանի մէջ հազի, թէ մի քանի բարեկեցիկ ընտանիցներ կան, բայց անոնց ալ հրացան տեսնենուն լեղինին կը պատոի: Այս օրերս Երգնկայի Դ: զօրաբանակը մեծ շարժման մէջ է. հազար տեսակ բաներ կիմանանց, բայց ամենէն կարեռը այն է, որ Սասունցի քաջերը նորէն ոտքի ելած են: Թիւրբերն ու Քիւրտերը սըրտարովի կը սպասեն և արեան ծարաւ կը զգան: Այս քանի ժամանակ է հետերնին խօսիլը զմուարացած է: Թիւրբերը առասպելական բաներ կը պատմեն այնտեղ կոռուղ ճան ֆիւաներու մասին:

Ան, մեր փարա ունեցողները իրենց ցառակին բերանը պիտի բանան, որ կրնանց զէնց առնել, զինուիլ և մեր Սասունցի եղբայրներու օրինակին հետեւելով՝ զէն ի ձեռնամացնել: Քիւրտերը առասպելական բաներ կը պատմեն այնտեղ կոռուղ ճան ֆիւաներու մասին:

Խ.

Փոքր Հայքի մեր ներկայացուցիչի գրած մի նամակից բաղում ենք հետեւեալը:

«Կառավարութիւնն Սըլվազի և \*\*\* կողմերէն զօրք կը զգէ Սասունի վայ, որովհետեւ կը լսենք թէ Փէդայիները Սասունը գրաւած են: Պատմուածին նայելով մինչև 200,000 զօրք պիտի թափէ Սասուն և սահմանագլուխները:

» Խօհիւրք կառավարութիւնը և Թիւրք խուժանը այժմէն սկսած են սպառնալ:

Այս կողմերու Հայութիւնը կը յուսամ թէ ինքզինքը պիտի պաշտպանէ, բայց ուրիշ կողմեր յոյս չունիմ, որ լուրջ պաշտպանութիւն կրնան ցոյց տալ » Օքնքի չափազանց մեծ պէտքը կայ»:

## ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

ՏԱՄԹՈՒՄ, 15 Ապրիլի 1904

1902 թիւ Մարտ 2-ին բաթումում, բանորաշան զօրեղ ցոյցի ժամանակ, ուսւս զինուորների գընդակներից ընկել են 13 հոգի: Այդ իսկ պատճառով Մարտ 9-ը ամեն տարի տօնում է բաթումի բոլոր բանորների կողմից: Այդպէս եղաւ և այս տարի: Մարտի 9-ին փակւեցին բաթումի բոլոր գործադաշտաւն հետեւ կամ պիտի զինաթափ ըլլայ, կամ պիտի Հայ բարեկամ մնալով՝ անոր զինակիցը գառ առնեները, և բանորները խաղաղ ցոյցերով տօնում էին նահատակ ընկերների մահւան տարեգարձը: Դը-

ըանից 12 օր յետոյ Մանթաշեանի գործարանում մեքենաների գործելու ժամանակ լիսեռների մէջ ընկաելով, չարաչար վիրաւորւեց մէցի 15 տարեկան մի պատանի բաները — Միիթար Խաչատրեան, որը և փոխադրւեց քաղաքային հիւանդանոցը: Երկու օր յետոյ մեռաւ նա, և մենք ականատես եղանք մի վերին աստիճանի յուզիչ տեսարանի: — Յուղարկաւորութեանը, քաղաքային հիւանդանոցից մինչև „Սուգուսուի“ գերեզմանատունը ուղեկցում էին հազարաւոր մարդիկ: Ննջեցեալը դրւած էր ամենաշքեղ դադաղի մէջ, որին հետեւում էին մի քանի պատկներ զանազան մակարութեամբ: Այդ ահագին տարածութիւնը մարդիկ, նոյն իսկ քահանան, որ եղական նորութիւն է այստեղ, ամենքը գնում էին հետիոտն՝ ուսերի վըրայ բարձր բունած դագաղը: Տեսնելով այդ ծովացած յուղարկաւորներին՝ մարդ կարծում էր, թէ մի նշանաւոր իշխան էր մեռնողը: Գերեզմանոցում ննջեցեալի և յուղարկաւորների մի քանի տեսակ լուսանը կարները հանելուց յետոյ, սկսեց թաղման արարողութիւնը խիստ հանդիաւոր կերպով: Վրացի բանւորների ներկայացւցիչներից երկուսը խօսեցին հոգեբուզի դամբանականներ՝ մինը վրացեն, միւսը հայոց լեզով՝ գրած: Դամբանականները թողին հասարակութեան վրայ շատ խոր տպաւորութիւն, մանաւանդայն կէտը, ուր բողոքում էր վրացի ներկայացւցիչը կապիտալիստական ռէժիմի դէմ և հրաւիրում բանւորներին անխտիր պայքար մղել կապիտալիզմի տիրող կարգերի դէմ՝ բարւորելու համար ստնահարւած պըրոլէտարիատի կացութիւնը: — Այդտեղ ամբոխը որուընդուստ ոււայի ձայնով թնդացրեց ամենքիս սրտերը ներշնչելով մեր մէջ կատարեալ հաւատք դէպի բանւորական յաղթանակը...

Դրան յաջորդեց Մարտի 28-ը, Զատկի կիւրակին, երբ աշխարհի բոլոր ծայրերում բրիստօնեայ մարդիկ յնծութեամբ ողջագուրում և գաղափարի յարութեան տօնն են աւետում միմեանց: Բայց Բաթումում և ամբողջ Ռուսահայաստանում այս տարւան Զատիկը ոչ մի յնծութիւն չը պատճառեց Հայի սըրտին: Ծանօթ այցելութիւնները, սովորական կերուխումները, երդ ու պարերը համարեա վերացել էին Հայի միջից: Եւ այդ օրը, տարւայ այդ ամենաուրախ և ամենափառաւոր տօնին, Հայ ժողովուրդը միայն սգաւորի տպաւորութիւն էր թողնում մեզ վրայ... ու երբ պիտ' ասէ լեզուն մարդոց՝ Հայն էլ յարեաւ ի մեռելոց: այդ բացականչութիւնն էր, որ թոչում էր բերնից բերան և քաղում մարդկանց սրտից կածալի հառաջանքներ... Այդ մաղմուտ տրամադրութեան զօրեղապէս նպաստեց այն հանգամանքն էլ, որ ճիշտ Մարտի 28-ին, Զատկի կիւրակին առաւուտեան, կովկասի զանազան ծայրերից էտապով Բաթում էին մըտցնում 51 Հայերի և նոյն օրը շոգենաւով ուղարկում որովագներին, Զարաւարին Ռուսաստանի նահանգները — նրանց արաւարային Ռուսաստանի նահանգները — նրանց արաւարավարերը... Մենք ընտելացել ենք այդ բանին,

որովհետեւ համարեա ամեն օր երկաթուղու գնացքը բաթում է մտցնում մի քանի տասնեակ աքսորական հայերի, որոնք ոյանցաւոր՝ են ճանաչւել ուսու կառավարութեան կողմից՝ Հայոց եկեղեցական կալւածների գրաւման ժամանակ ցոյց տրւած ոընդգիւմութեան պատճառով: Այս, ընտելացի ենք արդէն, բայց Զատկի կիւրակին աքսորել հայքի բարիստնեայ մարդկանց անծանօթ վայրեր, ենթարկելով նրանց հազար ու մի տեսակ չարչարանքների ու անարդանքների, — այդ լըրբութիւնը արդէն չափից գուրս զայրացուցիչ է... Պէտք էր տեսնել այդ կենդանի-նահատակների դէմքի արտայայտութիւնները՝ Բաթումից շոգենաւ նստացնելիս սպառազինւած կօգակների ուղեկցութեամբ, պէտք էր եկատել Զատկի առաջին օրւան երեկոյին այդ թշւառների աչքերից հոսող արտառութիւնը շիթերը, պէտք էր մի րօպէ երևակայել նրանց սրտում աեզի ունեցող հոգեհան ճմլումները և լսել նրանց սրտատոչոր հըրաժեշտի բառերը, — և այդ ամենից յետոյ հասկանալի կը դառնար այս տարւայ Հայի Զատկի տպաւորութիւնը...

Հայտ պարզ և միանդամայն հասկանալի դարձաւ արդէն ամենքին, որ ոռուաց հայակեր կառավարութիւնը վճռել է դատարկել կովկասը հայերից, իսկ այդ նպատակին հասնելու համար նա չի խնայում և ոչ մի միջոց: Այդ տեսակէտից մազաշափ անգամ զանազանութիւն չելք գտնի թիւրքաց և ոռուաց կառավարութիւնների մէջ: Ու շնորհիւ այդ դառն իրականութեան է, որ այսօր երբեմնի ամենաթունդ հակայեղափոխականներն անդամ ինքնաբերաբար դիմում և մտնում են աս կամ այն յեղափոխական դրօշի ներքեւ, հաստատ հաւատացած լինելով, որ արտաքոյ յեղափոխութեան մեզ համար չիք փրկութիւն!

Զը մռանամ յիշել այստեղ և այս փառաւոր ցոյցը, որ Ռուսաստանի Սօցիալ-Դեմոկրատիայի կողմից անմահացրեց 1904 թւի փետրուարի 1-ը: Այդ օրը Բաթումի ոռուաց եկեղեցու գաւթում տեղի էր ունենալու ոռու-եապօնական պատերազմի յայտարարութեան առթիւ ցարի հրատարակած մանիֆէստացիայի ընթերցումը: Տեսնելով ծովացած հասարակութեան մեծ բազմութիւնը՝ վճռում է հանդէսը կատարել եկեղեցուն մօտ գտնուղ հրապարակում:

Հրապարակային այս ժողովը բացւում է „Բօժէ, ցարեա խրանի“ հիմնը նւագելով զինուորական երաժշտական խմբի կողմից, որի ժամանակ զօրքերի շարքերի միջից բարձրանում են ոռուական եռագոյն դըրօշակները: Այդ րօպէին իսկ ամբոխի միջից որովագները, իսկ մի խումբ յանդուգն յեղափոխականներ ճեղքելով հասարակութիւնը՝ ելում են մայր-դրօշակակրի ձեռքից դրօշակը, պատառուում և գցում ոտքերի ներքեւ: Անմիջապէս բարձրացնելով Ռուսաստանի Սօցիալ-Դեմոկրատիայի յեղափոխական կարմիր դրօշակը՝ աքսորավարերներն սկսում են երգել յեղափոխական եր-

գեր: Մինչ՝ ոստիկանապետը, գլուխը կորցրած, սրբնթաց կառքով վազում է դես ու դես, մինչև որ վրայ են հասնում կօզակները և ցրում հասարակութիւնը: Չերքակալւեցին մի քանի հոգի, որոնց հետքը կորցրեց կառավարութիւնը...

Հոյցերն ու աշագին թափորները շարունակւեցին մի քանի օր, կառավարութեան աչքի առաջ, բաղաքի կենտրոնական մասերում...

Ի Պ Ի Տ Ե Բ

## ԹՐՔՈ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԽ

22 Մարտի, 1904

Ուրբո-Պարսկական սահմանագլխի վրայ անհոգ և հապարտ ընկած հայկական Պարը երկնում է ծննդաբերական ամենասոսկալի ցաւերով... Վասպուրականը նոյնպէս տանջուում և գալարուում է նոյն ցաւերով: Չը նայելով, որ սարերը գեռ ծածկւած են ձիւնի հաստ շերտերով՝ այսուամենայնիւ այժմւանից իսկ սկսել են մի շարք խոռովոյզ գեպեր կատարել:—

Վանում տեղի են ունեցել խոռովարկութիւններ և բազմաթիւ ձերքակալութիւններ: Ընկեր գաւաճանները մատնել են կառավարութեան իրանց կօմիտէն և մի քանի խմբեր իրանց ամբողջ կազմով և գրագրութիւններով: Հայ ազգաբնակութիւնը կրկին սարսափի և սոսկումի մէջ է:

(Օսմանեան գազանացած զօրքերը, երկար ժամանակ ու աօձիկ չըստանալով, յարձակուում են հրամանատարի տան վրայ, բայց քաջութիւն և համարձակութիւն չեն ունենում այս անարիները մի լուրջ գործ կատարել, այլ իրանց կատարութեան թորոնը թափում են խեղճ հայերի գլխին՝ կողոպտելով և ծեծելով նրանց: Եթէ կուսակալի միջամտութիւնը և մեղմացնող միջոցները չը լինեն, տեղի պիտի ունենար կոտորած, որին ամեն վայրկեան սպասում է կտրիճ Այգեստանը:

Վառավարութիւնը տենդային գործունեաւթեան մէջ է. նա հաւաքում է արձակած հին զինւորներին և նորերի զինւորագրումն ամենաեռանդուն կերպով առաջ է տարւում: Պատերազմի հաւանականութիւնն ակներեւ է: Շւարած կառավարութիւնը սահմանագլութիւնների պահպանութիւնը և նոր պահականոցների կառուցումը խնդրել է Շամզիբանի Շէլիս-Մահմադ Սադղից՝ նրան նոր սիստեմի հազար հինգ հարիւր հըգացան նւէր ուղարկելով:— Ողորմելի կայսրութիւն...:

Ուրմին սոսկումի մէջ է: Շէյխը պատրաստում է արշաւանքի Պարսից կառավարութիւնից յետ խլելու համար իր պապենական կալածներ թեարգեարը և Մարգեարը: Պարսից կառավարութիւնն էլ իբր թէ լուրջ պատրաստութեան մէջ է:

Ը էյխ Մահմադ-Մադըզը կուի մէջ է Հարզաեի

(Հերարի-Կորդւաց Աշխարհ) իր ստորագրեալ խալիֆի չետ, որ ապստամբել է վերջերս:

Շէյխի ապատակները փետրուարի վերջերում թաւանի տւին Սօմայի Շիկակների հազարաւոր ոչխարները:

Ամերիկացի միսիօնարի և իր ծառայի սպանումը Սալմաստ-Խոյ Ճանապարհի վրայ՝ պակաս խոռովութեան և սարսափի պատճառ չը դարձաւ:

Վաւանացի մի բուռն կտրիճ Ասօրիները մտադրած են գարնանը շատ լուրջ կոիւ սկսել: Անցեալները նրանցից մէկը ինձ ասում էր. „Մենք մոռանալ չենք կարող մեր վոէժը, որ կտակեցին մեր արւած-խորոված եղբայրները: Մենք չենք թողնի հանգիստ մնան Ուրմիի մեր անարի և կրօնավաճառ եղբայրներին, ամերիկացի և եւրօպացի խաչագող միսիօնարներին, որ մեր և մեր նահատակների անունները շահագործեն և մեզ բոլորովին անօգնական թողնեն: Այնպէս պիտի խոռովենք, այնպիսի միջոցները ձեռքոք պիտի առնենքի, որ այդ վատերը ուզենազուզեն մասնակացին ցեն ու օգնեն մեր կուին, հակառակ դէպքում իրանք էլ մեզ հետ կոտորւեն...“: Վաւանացու խօսքերը դատարկ չեն...

ԵՐՄԷԿԻՆ

## Մ Ի Դ Ա Տ

Դիեռ չափազանց թարմ է Ալէքսանդրապոլի քոյցի տպաւորութիւնը շատերի մէջ: Այդ թոյցը ո՞չ միայն անակնկալ երեսոյթ էր ցարի կառավարութեան համար նրա „ամենահպատակ“ հայ ստրուկների կողմից, այլ և նշանաւոր նրանում, որ իւր բազմամարդութեամբ և բողոքելու յանդուգն եղանակով բըռնակալ կառավարութեան առաջ կանգնեցրեց երեկուայ խոնարհ“ հպատակների այսօրւայ քաղաքացիական քաջութեամբ տոգորւած զաւակներին, որոնց օրինակին հետեւցին կովկասեան քաղաքների, գիւղերի հայ ազգաբնակութիւնը, հայ գործիչները և մինչեւ թմրած հայ հոգևորականութիւնը—բունադատուած ամբոխից:

Դմբոստութիւնն ապշեցնող եղաւ և երեան հասնեց կովկասահայի խորին. գիտակցութիւնը իր իրաւունքները պաշտպանելու մէջ ընդդէմ քայլայւող ըէմիմի: Եւ ըմբոստութեան առաջին ու գործնական քայլն արեց Ալէքսանդրապոլը, որով և ուսւ մօնարխայի ամենախիստ կատաղութեան աւելի մեծ չափով արժանացաւ:

Հարի կառավարութիւնը հէնց առաջին իսկ վայրկեանին ամենախիստ պատժի գործադրութեան մասին մըտածեց. և նա գործադրեց այդ, թէկ յարմարագոյն պատասխանն էլ ստացաւ: Նրան ցանկալի էր իրար յաջորդող ցոյցերին մասնաւոր բնաւորութիւն տալ և

անհատների վրայ ձգել դէպքերի ամբողջ պատասխանաւութիւնը՝ իբրև „Խոռովարաների” իր դատարանի առաջ քաշ տալով նրանց:

Ահա՝ այդպիսի հԽոռովարաների դատն էր, որ տեսնեցաւ Մարտ 20—22-ին, Ալեքսանդրապոլի մէջ տեսնեցաւ Մարտ 20—22-ին, Ալեքսանդրապոլի մէջ

Երեանի նահանգական դատարանի ըջուն սեսանի պարտականութիւն համարեց դատը դանիակ տեսնել: Դատավարութեան նախագահում էր Բակալօ, ներկայ էին և նրա երկու ընկերները—Մատուսեիչ և Եակութէնկօ: Մեղադրում էր դատախազ Գլագոլէվ, իսկ պաշտպանում էին չորս հոգի:— Մուրաւել Մարտի 15-ին կամւած մեղադրական ակտի վրայ մեղադրում էր Ալեքսանդրապոլ քաղաքի բնակիչ Հայկ Ալեքսանդրով Ամատունի, մի յայտնի և ամենքից յարգւած ինտելիգէնտ Երիտասարդ, Սիմոն Առաքելով Յարութիւնով և Մեծ Դիւզքէնտ գիւղի քահանայ Տէր-Յովհաննէս Անտոնով Յովհաննէսեանց, երկուն էլ ազատ քաղաքական նախապաշարումներից:

Իբրև Խոռովարաներ, ցուցարարներ մեղադրում էին Ալեքսանդրապոլ քաղաքի բնակիչ Հայկ Ալեքսանդրով Ամատունի, մի յայտնի և ամենքից յարգւած ինտելիգէնտ Երիտասարդ, Սիմոն Առաքելով Յարութիւնով և Մեծ Դիւզքէնտ գիւղի քահանայ Տէր-Յովհաննէս Անտոնով Յովհաննէսեանց, երկուն էլ ազատ քաղաքական նախապաշարումներից:

Դատախազը յենւելով 1903 թ. Նոյեմ. 15-ին կազմւած մեղադրական ակտի վրայ մեղադրում էր Արանց Պատժական Օրինագրքի 264 յօդւածի տրամադրութեան համաձայն, որով մեղադրուղները դատապարտում են իրանց գործած յանցանքի համար տաժանակիր աշխատանքների 12—15 տարով:

Ըստ մեղադրական ակտի\* „...Ալեքսանդրապոլ քաղաքի բնակիչ պահեստի պրապօրշիկ (զինորական աստիճան) Հայկ Ալեքսանդրով Ամատունի՝ 27 տարեկան, նոյն քաղաքի մեջանին Սիմոն Առաքելով Յարութիւնով՝ 22 տարեկան և Ալեքսանդրապոլի դաւաբի Մեծ Դիւզքէնտ գիւղի քահանայ Տէր-Յովհաննէս Անտոնով Յովհաննէսեանց՝ 33 տարեկան, բոլոր իրանց ցուցմունքներից յետոյ, մեղադրում են նրանում, որ 1903 թ. Յուլիս 29-ին Ալեքսանդրապոլ քաղաքում, ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. քաղաքից երկամուղի կայարանը մեկնելու ժամանակ, ուրիշ անյայտ մասցած անձնաւորութիւնների յետապնդման հետ միասին՝ որպէս զի կաթողիկոսին ստիպեն ըստ կատարել 1903 թ. Յունիս 12-ի բարձրագոյն հրամանը՝ Հայ-լուսաւորչական եկեղեցու ստացւածքների կառավարութիւնը պետական հաստատութիւնները ներմուծելու կարգադրութեան մասին, մասնակցութիւններ են ունեցել այդ նպատակի համար հաւաքւած ամբոխի գործողութիւնների մէջ, որը բռնութիւն ցոյց տւեց կաթողիկոսի և նրան պաշտպանող ոստիկանական պաշտօնեաների անձւականութեան վրայ, արտայայտած նրանում, որ ամբոխի միջից ոմանք ուժով կանգնեցրին կաթողիկոսի կառքը, քարեր նետեցին կաթողիկոսի նատած վագոնի վրայ և նրան պաշտպանող դաւապետի օգնական Պալովին ու ոստիկանական պրիստաւ

Զէնկօին ծեծեցին, որի ժամանակ մեղադրւողներից առանձնապէտ Ամատունին հարւածներ հասցրեց դաւապետի օգնական Պալովի կողքին, մեղադրւող Յարութիւնով ձեռքով ջարդեց կաթողիկոսի նստած վագոնի ապակին, իսկ Տէր-Յովհաննէս Յովհաննէսեանցը կանգնելով կաթողիկոսի վագոնի մօտ, աղաղակեց՝ ձեռքերը թափ տալով, և կաթողիկոսի շքախմբի մէջ գտնողով վարդապետի մօրութը. բռնեց...“:

Ահա՝ թէ ինչպիսի մեծ յանցանքների համար կամցան դատապարտել երեք հայերին 12—15 տարիների տաժանակիր աշխատանքների...

Սակայն դատարանը, որին էր վերապահում հաստատել այդ մեղադրական ակտը վճիռը բեկանեց և դատապարտեց Հայկ Ամատունին ու Տէր-Յովհաննէս քահանային 8, իսկ Յարութիւնովին 6 ամիսների բանտարկութեան՝ առանց իրաւունքների զրկման:

Արանով ոռուսական դատարանը միայն մի տարիձան անպատճութիւնից դուրս եկաւ:

## ՄԻ ԿՈՉ

Մեր Ռուսաստանցի սօցիալ-գեմօկրատ ընկերները, որ գտնում են այժմ Ակատուելի տաժանակիր բանտառում, հետեւալ հրահրիչ ու բարձր կոչն են ուղղում Ռուսաստանի բոլոր յեղափոխականներին:—

„Աղետի նախընթաց օրը ցարի կառավարութիւնը երեան է գալիս իր ամբողջ այլանդակ մերկութեան մէջ: Նա շտապում է անել այն բոլորը, ինչ կարող է անել մի կառավարութիւն, որ մարմացումն է ասիական դէսպօտիզմի և բուրժուազիայի ինտերէսների ծառայութեան:

„Գեղջկական մասսաների սովոր ու աւերումը. Հանուր ժողովրդի տգիտութիւնը, որ պահպանում է տերաէրների միջոցով. ալիօնուիզմը՝ իբրև գլխաւոր միջոց տէրունական հասոյթների. զօրք, նաւատորմ ու լրտեսութիւն՝ իբրև գլխաւոր նիւթ տէրունական ծախսերի. դատապարտութիւններ մահւան, աքառը, բանտ, տաժանակիր աշխատանք, մարմացին պատիժ. ոստիկական ու չինովնիկական կամայականութիւն. Հարիւրաւոր բանուրների կոտորած (միապետութիւնը թշնամիներից եաւպօնացներից աւելի չէ խնայում ուռսական կեանքերը). դաւաճանութիւն՝ իբրև սիստէմատիկական քաղաքականութիւն բանուրական խնդրի շրջանում. գրգուումն ցեղական անմիտ թշնամութեան, եղւիտական գրգուումն մէկ ազգութեան միւսի գէմ. ներքին քաղաքականութիւնը՝ սպեկուլացիա ի հաջիւ ժողովրդի կուրութեան. կողոպւտ հայերի աղքային գոյքերի, վայրենի կործանումն եւրօպա-

\*.) „Օսւոզոժնենիէն” Խօ. 21. 1904.

կան քաղաքակրթութեան ֆինլանդիայում. կատարեալ և ընդհանուր քաղաքական ստրկութիւն, — աշա' ան. կատար ցուցակն այն ամեն՝ նշանների, որոնցով գծագրւած կը լինեն պատմութեան էջերում ցարերի միապետութեան վերջին օրերը:

ո Եապօնիայի հետ այս ո հարկադրւած՝ պատերազմը — նրա վերջին խօսքն է. ո հարկադրւած՝ — աւազակային արտաքին քաղաքականութեամբ դժբախտ Զինաստանում!

ո Ինկերներ, մեզ, հայրենիքից կտրւածներիս, Խուլ կերպով հասնում են տեղեկութիւններ ժողովրդի վերաբերութեան մասին դէպի պատերազմը: Մենք լսել ենք միան պաշտօնական զեկուցումները հայրենասիրական զգացումների ոգեսրութեան մասին, ժողովրդի հաւատարիմ հպատակութեան ու շօվիմիզմի ցոյցերի մասին:

ո Եւ այդ օրգիայի մէջ ո՛չ մի ձայն գիտակցութեան, ո՛չ մի շեշտ յեղափոխական բողոքի:

ո Այդպիսի րօպէ չէր, երբ մենք իշանք բեմից: Մենք տեսնում էինք քաղաքային պրոլէտարիատի մասսաներին, որ թաքցնում էին իրանց խիստ ատելութիւնը դէպի միապետական խմբակը: Մենք թողինք յեղափոխական սօցիալ-դէմօկրատիային այն նախընթաց օրւայ մէջ, երբ նա պատրաստում էր կազմել երրեւ պրոլէտարիատի համա-՛րուսաստանի քաղաքական կուսակցութիւն, մի և ամբողջական իր ծրագրով, հաստատուն իր կանօնաւոր կազմակերպութեամբ: Մեր աչքի առաջ գեռ պայմանագրից, իբրև տարբերքի չեղած հողմ, գործադուլները հարաւում: Մեր աչքով գեռ տեսանք, ինչպէս միապետութեան ծառաների ձեռքով աւազակաբար կողոպտած և քաղաքացիական իրաւուզիկութեան հանգոյցի մէջ խեղդուող ոյլայի աղդութիւնները նույսաստանում համակրանքով մեկնում էին իրանց ձեռքը յեղափոխական պրոլէտարիատին, իբրև միակ ձշմարիտ մարտնչողի ազգութիւնների ազատագրութեան, և գեռ մեր լսողութեան մէջ չեն խլացել գարնանային աւետաբեր փոթորկների արձագանքները — ցոյցերը:

ո Եւ աշա' այժմ, առնելով մաղթանքների, ազթքների, ուղերձների, ցոյցերի, հրճանքների լուրերը, որոնք ողջունում են պատերազմական կոտորածը և դրա ստեղծիչ-կայսրին ու Սիբիրի միապետին, Կիշինեւի ցարին ու Վիլնյայի դաշճին, Լեհական, Հայկան, Ֆինլանդական, համա-՛րուսաստանի խեղդողին և այն, և այն, և այն, — կարելի է կարծել, թէ ուսւ պրոլէտարիատը փոխել ու դարձել է ոչխարների կոյր հօտ, որ՝ պատերազմը „Խաղաղակը“ ցարիկմի համար մի նոր շանթարգել է:

ո Մենք չը գիտենք, թէ իսկապէս դրութիւնն է, և լաւ գիտենք, թէ ինչ արժէք ունին կառավարական աւած տեղեկութիւնները: Բայց և այնպէս հարկ ենք համարում ներկայ կոչն ուղղել մեր բոլոր յեղափոխական ընկերներին:

ո Պատերազմը մեր կուսակցութեան համար առաջ է բերում մէկ ամենակարևոր պայման: Այս վճռական րօպէին յեղափոխական սօցիալ-դէմօկրատիան պէտք է կանգնած լինի իր պատմական կոչման բարձրութեան վրայ:

ո 1877 թ. կառավարութեան համար գեռ գիւրին էր կոտորածը զարդարել մարդասիրական և մինչեւ իսկ աղատամիտ զգեստով („Եղայր-տաւներ, աղատագըրութիւն լծից“ և այլն): Բայց հիմա, ախր խնդիրը միայն կայանում է ո մեր առեւտրական ինտերէսներում“, այսինքն մեր վաճառականների շահերում, — և այս հանրական սպանութիւններն այդ ո կուլտուրական նպատակով“ պաշտօնական ֆրազաբանութիւնը դարձնում է մի տեսակ հայրենական պատերազմ:

ո Սօցիալ-դէմօկրատիան ամենալայն և ժրաշան ագիտացիայով պէտք է լուսաբանէ միլիտարիզմի և պատերազմի նշանակութիւնը, որ տալիս են միայն մահ, աղքատութիւն և արցունք. պէտք է մերկացնէ խակական աստառը շօվինիզմի ճճռան ֆրազների, պէտք է յիշեցնէ, թէ ուր ուսերի վրայ են ընկնում քաղաքային վարչութիւնների առատաձեռն նւիրատութիւնները:

ո Հաւատարիմ հպատակութեան ցոյցերին, մենք պէտք է պատասխաններ ամեն կողմերում յեղափոխական մասսայի ցոյցերով: Կարմիր գրօշը մենք պէտք է բարձրացնենք ամեն տեղ, ուր բարձրացնում են ո ազգայինը“:

ո Օռառարական մամուլի հայրենասիրական վկիվկոցին „Ռուսաստանի ինտերէսների մասին Հեռաւոր Արևելքում“ մենք պատասխաններ ժողովրդի կուլտուրական անթիւ պահանջների ցուցմունքով: Հերիք է արին կապիտալիստական Ֆօլօնի վաճառանոցների համար... Թող կորչի պատերազմ և միլիտարիզմ...

ո Մարդատեսաց պոռոցներին „Ռուսաստանի թշնամիների“ մասին՝ մենք կը պատասխաններ այս կոչով — ո պրոլէտարիներ բոլոր երկիրների, միացէք“:

ո Պաշտօնական աղմուկին՝ հաւատարիմ հպատակութեան գագումների մասին, որոնք միացնում են ուսուներին առանց խտրութեան ազգութիւնների, մենք կը պատասխաններ ճշմարիտ արտայատութեամբ այն զգացման, որ միացնում է ամեն ազգութիւններին Ռուսաստանում: Մենք կը պատասխաններ կող կորչի միապետութիւն:

ո Մեզ մի րօպէ անդամ չէ լքում այն խորին յոյսն ու հաւաստիութիւնը, որ յեղափոխական պրոլէտարիատի հզօր ձայնը բացարձակաբար ամբողջ Ռուսաստանի գիմաց կարձակէ (և գուցէ արդէն արձակում է) իր գատապարտութիւնը միապետութեան նոր ոճիրի գէմ: Եւ մենք, որ գուրս ենք ձգւած շարքերից, անում ենք այն բոլորը, ինչ կարող ենք թո՛ղ այս կոչը լինի մեր ցոյցն ընդդէմ ցարերի կառավարութեան: Թո՛ղ մեր ձայնը միախառնէ Ռուսաստանի պրոլէտարական ընդհանրութեան բացար-

ձակ բողոքի հետ:

”Ուսո՞ղ կորչի՛ միլիտարիզմ՝ թո՞ղ կորչի՛ միաւ պետութիւն։ Կեցցէ՛ քաղաքական ազատութիւն։ Կեցցէ՛ միջազգային յեղափոխական սօցիալ-դէմոկրատիա։”

(Ստորագրութիւններ)

Փետրվար 1904 թ.

Վկասուելի Տաժանակիր Բանտ

թեան շնորհով դեռ երկարատևում է բուրժուազական գասակարգային տնտեսական տիրապետութիւնը՝ միշտ իրան խոնարհ ծառայ և կամակատար ունենալով զանազանատեսակ քաղաքական իշխանութիւններն աշխարհի ամեն կողմերում։

Եւ պրօլետարիատն այսօր, ինչպէս և ամեն մի ժամ, ամեն մի րօպէ, իր պատմական դերի մէջ է։ Նա առաջ է ընթանում, նա հետզետէ, թէե դանդաղ, փշրում է այն բարձրութիւնները, որոնց ետեւում բուրժուազիան ինքն իրան ապահովւած է զգում գոհութեան, ինքնաբաւուկանութեան ժպիտը շրթունքների վրայ։

Դասազարհային ամբողջ արդիւնաբերութեան ստեղծողը՝ ոցնցոտիաւորը<sup>“</sup>, բայց ամբողջ աշխարհը կերակրող հազարողը, անվճար իր կուի մէջ, հաստատ հաւատքով մարդկութեան փրկարարը լինելու և մի նոր աշխարհի գուռը բանալու նրա առաջ՝ առ այժմ իր պահանջների, իր կորցրած իրաւունքների մինիմումն (minimum) է գնում պարագիտիզմի առաջ։

Մայիսի Մէկը.—չէ՛ սա տօնը օրդիաների, Խըրականների, ստոր բնազդների ցուցահանութեան և ո՛չ էլ բուրժուազական յաղթանակների և մարդկային մի սեռի դարաւոր բռնութեան յաւերժացման միւս սեռի վրայ . . .

Մայիսի մէկը տօնն է պրօլետարիատի, նրա՛, հետեւաբար և ամբողջ մարդկութեան սպասած ամենակատարեալ էմանսիպացիայի — ազատագրութեան . . .

Մայիսի մէկը տօնն է պրօլետարիատի, նրա՛, հետեւաբար և ամբողջ մարդկութեան սպասած ամենակատարեալ էմանսիպացիայի — ազատագրութեան . . .

Իբրև հարազատ և անխուսափելի բացասական ծնունդ բուրժուազական տիրող անբաւար կարգերին ապրութեամբ, դուրս եկած հէնց իր — բուրժուազիայի ծոցից և կանգնած պատմական ու գիտական ամենաամուր հիմունքի վրայ՝ իր արդէն կազմակերպութ գասակարգային գոյութեամբ առաջ է տանում սուրբ, անհրաժեշտ և բնական այն կոիւը, որի մէջ նրան շպրտել է սօցիալ-տնտեսական ներկայ իրականութիւնը, որն արհեստական չէ և որից դուրս գալ առանց վերջնական յաղթանակի՝ նա անկարող է, եթէ նոյն իսկ ինքն էլ ցանկանայ . . .

Մարդկային անհատական իրաւունքները — սեղմած կապիտալիզմի և կապիտալիստի սուրբ, ամուր, երկաթեա՛, ձիրանների մէջ — հրապարակ են գոչել պրօլետարիական բանակը՝ ինքն իր իսկ հրամանատարութեան տակ առաջ խաղալու և պատմութեան ու գիտութեան տւած զէնքերով, իբրև սօցիալիստ յեղափոխական մի կենսունակ տարր, հիմնայատակ անելու ներկայի այն բոլոր կեղծ-հասարակական հաստատութիւնները, կազմակերպութիւնները և դրանցում գարբնալ իրաւաբանական յարաբերական եղանակները գասակարգերի և անհատների մէջ, որոնց գոյու-

թի արդի կազմակերպելով իր շարքերը, գիտակցութեան բերելով իր անգիտակից անդամներին, մի և ընդհանուր յեղափոխական գրոշի տակ համախմբելով զանազան ազդի բանարարներին, իսկ միւս կողմից էլ հրապարական ցոյցերով, իբրև սկզբնական յեղափոխական քայլերով, գործնական ասպարէզ է դուրս գալիս պրօլետարիատը՝ իր հուժկու աղաղակներով, իր բռնու և ոգեսը ագիտացիայով ընդդէմ յայտնի և ամենակուլ թշնամու։

Եւ այդ ագիտացիան, այդ բողոքը, պահանջների իրաւացիութիւնը և արդարութիւնը, աւելի քան մի ուրիշ օր, Մայիս Մէկին է էլեքտրականացնում քաղաքակիրթ աշխարհի, մտածող աշխարհի մտածող ուղեղները։

